

4. Նյութերի համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու էկոլոգիկ պայմանների տարբեր տիպերի ազդեցությունը տնտեսությունից բնույթի ու վարման եղանակների վրա: Ցածրադիր հարթավայրերում և հովիտներում անասնապահությունն ունենում է օժանդակ նշանակություն, կիրառվում է դրա նստակյաց ձևը՝ խոշոր եղջերավոր անասնապահության զերակշռությամբ: Նախալեռնային գոտիներում, կոմպլեքսային տնտեսության համակարգում բարձրանում է անասնապահության դերը, փոփոխություն է կատարվում անասունների տեսական հարաբերակցության մեջ: Որոշակի առանձնահատկություններն է հայտ են գալիս նաև լեռնային գոտիներում:

5. Ազգագրական համեմատական նյութերը ցույց են տալիս, որ ամբողջ բազմազանությունը հնարավոր չէ բացատրել միայն էկոլոգիկ պայմանների տիպերով՝ միևնույն պայմաններում կարող են առաջանալ և զոյատել անասնապահական տնտեսության տարբեր համալիրներ, երկրագործության և անասնապահության տարբեր հարաբերակցություն և այլն: Այստեղ վճռական նշանակություն են ստանում սոցիալտնտեսական զարգացման մակարդակը, էթնո-մշակութային ավանդույթների բնույթը, միջէթնիկ առնչությունները և փոխադրությունները:

6. Հայոց անասնապահական տնտեսության բնորոշ գծերը թելադրում են առանձնացնելու ոչ միայն տիպա-էկոլոգիկ, այլ նաև լոկալ-էկոլոգիկ պայմանները, որը ենթադրում է միկրոլանդշաֆտային պայմանների ուսումնասիրում: Վերջիններս համախ առաջանում են միևնույն երկրորդի բազմազան ձևեր, որով է հայտ են գալիս ադապտացման մեխանիզմները և կոնկրետ դրսևորումները:

7. Սոցիոմշակութային գործոնների մեջ նույնպես հարկավոր է առանձնացնել երկու խումբ՝ ընդհանուր երևույթներ /սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ և այլն/ և կոնկրետ պատմական իրադարձություններ, որոնք որոշակի դրոշմ են դնում անասնապահական մշակույթի տարբեր կողմերի վրա:

ԱՐՄԵՆԱԿ ՄԱՍՏԱԿԱՆՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅՑՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ  
XIX դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՊՈԼՄԱՀԱՅ ԴԵՄՈՒԿՐԱՍԱԿԱՆ  
ՄԱՄՈՒԼՈՒՄ

XIX դ. երկրորդ կեսին պոլսահայ զաղթողները հաշվվում էր շուրջ 250 հազ. մարդ, որը կազմում էր կոստանդնուպոլսի բնակչության 20,9 տոկոսը: Պոլսահայերի թողած սոցիալական, հոգևոր և մշակութային ժա-

ռանգությունը, որը բազմակողմանիորեն արտացոլված է արևմտահայ մամուլում, հայ քաղաքային ազգագրութունն ուսումնասիրելու շատ կարևոր հնարավորություններ է քննեռում: Այդ մամուլի էջերում տեղ են գտել պոլսահայ գաղթօջախի հասարակական-տնտեսական կենցաղի, հոգևոր մշակույթի և սոցիալական տարբեր խմբերի ու շերտերի նկարագրությունները: Ըստ իս, այդ նյութերը կարելի է դասավորել հետևյալ կերպ:

1. Հասարակական-տնտեսական կենցաղ: Ուշագրավ են զբաղմունքներին /երկրագործություն, ձկնորսություն, արդյունագործություն, առևտուր, մտավոր աշխատանք և այլն/, նյութական մշակույթին /բնակարան, դպրոց, մանկապարտեզ, հիվանդանոց, որրանոց, եկեղեցի, գերեզմանոց, կահկարասի, փոխադրամիջոց, զգեստ, զարդարանք և այլն/, քնտանիքին /կազմը, ձևը և հիերարխիան, հարսանիք, ծնունդ, կտուներ, հուղարկավորություն, ազգակցական համակարգ և դրանց հետ աղերսված ծիսական սովորույթներ/ վերաբերող նյութերը:

2. Պոլսահայերի սոցիալական խմբերն ու շերտերը: Որոշակիորեն ներկայացված են՝ աշխատավորները / երկրագործներ, ձկնորսներ, ևավաստիներ, մշակներ, բեռնակիրներ, արհեստավորներ և ուրիշներ/, կղերա-ամիրայական դասը /առևտրականներ, վաշխառուներ, մեծահարուստ պաշտոնյաներ, հոգևորականներ և ուրիշներ/, մտավորականությունը /ուսուցիչներ, բժիշկներ, գրողներ, լրագրողներ, դերասաններ ու երաժիշտներ, փաստաբաններ և ուրիշներ/:

3. Հոգևոր մշակույթը ևս բազմակողմանիորեն է արտացոլված /բանահյուսություն՝ ժողովրդական երգ՝, պարեր, հեքիաթներ և այլն, ինչպես նաև խաղեր, տոներ, կրոն և հավատալիքներ, ժամանց, լեզու՝ պոլսահայ բարբառ, և առհասարակ ժողովրդական պատկերացումներ բնութայան և հասարակության մասին/:

#### ԱՐՏԱՇԵՍ ՆԱԶԻՑԱՆ

ՔԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ժողովրդագիտական ուսումնասիրություններում շատ կարևոր է հետազոտական մեթոդների համալիր /կոմպլեքս/ կիրառումը, զուգակցելով ազգագրության, բանահյուսության, հնագիտության և հարակից այլ մյուզիկների նյութերի համեմատական քննությունը: